Կարգապահական գործ թիվ ԿԳ-22013

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2022թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 128-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԹԻՎ ԿԳ/84-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԵՐՎԱՆԴ ՌԱՖԻԿԻ ՎԱՐՈՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ նաև՝ Պալատ) խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ), նիստը նախագահող՝ Պավել Գյուլումյանի, Խորհրդի անդամներ՝ Գայանե Դեմիրչյանի, Մանե Կարապետյանի, Ռուբեն Հակոբյանի, Կարեն Սարդարյանի, Մարինե Ֆարմանյանի կազմով:

Քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի:

Քննության առնելով փաստաբան Երվանդ Ռաֆիկի Վարոսյանի (արտոնագիր թիվ 776) **(այսուհետ՝ նաև Պատասխանող)** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>.**

Քաղաքացի Վահագն Աբգարյանը **(այսուհետ նաև՝ Դիմող),** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ նաև Պալատ)**, հայտնել է, որ տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ՝ փաստաբան Երվանդ Վարոսյանը 2022 թվականի մարտի 25-ի դատական նիստից հետո իրեն դրսևորել է փաստաբանին ոչ հարիր ձևով:

Դիմողը նշել է, որ փաստաբանը նիստերի դահլիճում՝ դատական նիստից հետո, սադրել է իրեն և վիրավորել «տականք մարդասպան, պատասխան ես տալու...» բառերով, ինչպես նաև դատարանի շենքում շարունակել է հնչեցնել սեռական բնույթի հայհոյանքներ:

Հավելել է, որ այդ ամենը տեսանկարահանվել է մամուլի կողմից և իր դիմումին կից ներկայացրել է լազերային սկավառակ:

Միաժամանակ խնդրել է փաստաբանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

«Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբան Երվանդ Վարոսյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Վահագն Աբգարյանի դիմումի վերաբերյալ, սակայն վերջինս կողմից դիմումի վերաբերյալ բացատրություն չի ներկայացվել:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 20.05.2022թ. թիվ 98-Ա/ԿԳ-22013 որոշմամբ Փաստաբանի նկատմամբ հարուցվել է ***կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև*** Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք)** ***2.2.2-րդ ենթակետի խախտման հատկանիշներով:***

25.05.2022թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Ռուբեն Բալոյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

22.07.2022թ. կարգապահական գործը նախապատրաստող անձ Ռուբեն Բալոյանը կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ առարկություն չի ներկայացվել:

26.07.2022թ կարգապահական գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 22.11.2022թ. ժամը՝ 19:30-ին, և 27.12.2022թ. ժամը՝ 19:00-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ

նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

«Live News» լրատվական կայքի տեսագրությունից հետևում է, որ.

- Վահագն Աբգարյանը դիմելով դատավորին ասում է. «ասեք կողքից չխոսան էլի սրանք, ես ինչա արա», այնուհետև լսվում է, որ ինչ որ մեկը ասում է. «արան դու ես», ինչինց հետո հնչում է «արա էս բա ինչ ես»: Այնուհետև Դիմողը փաստաբան Երվանդ Վարոսյանին ասում է. «տեղդ վեր ընգի արա, խելոք քեզ պահի արա», իսկ մյուս անձը հայհոյում: Ի պատասխան Դիմողին Փաստաբանը նշում է. «արա խելոք դու քեզ պահի», այդ ընթացքում Փաստաբանի հասցեին շարունակում են հնչել սեռական բնույթ կրող հայհոյանքներ, սակայն Փաստաբանը չի պատասխանում դրանց նույն կերպ՝ միայն նշելով, որ. «զեզ չափի մեջ պահի»: Մինչդեռ սեռական բնույթ կրող հայհոյանքների տարափը շարունակվում է: Այնուհետև, Փաստաբանի հասցեին Դիմողը հնչեցնում է. «վիժվածք քեզ խելոք պահի», որին ի պատասխան Փաստաբանը նշում է. «արա վիժվածքը դու ես, անասուն, մարդասպան տականք: Պատասխան ես տալու»: Այդ ժամանակ Դիմողը Փաստաբանի հասցեին հնչեցնում է սեռական բնույթ կրող հայհոյանքներ, որին ի պատասխան Փաստաբանը նույն հայհոյանքը վերադարձնում է դրա հեղինակին: *Սույն փաստերը հաստատված են համարվում «Live News» լրատվական կայքի տեսագրությունից, ինչպես նաև քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման պատճենով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Երվանդ Վարոսյանը փաստաբան է հանդիսանում 19.10.2007թ., և տեղեկանքը տրամադրելու օրվա դրությամբ փաստաբանը ունի 3 չմարված կարգապահական տույժ (1 հիմնական տույժ և 2 լրացուցիչ):

Պալատի խորհրդի 09.10.2015թ. թիվ ԿԳ/145-Ա որոշմամբ փաստաբան Երվանդ Վարոսյանի նկատմամբ կիրառված «վերապատրաստում (8 ժամ)» լրացուցիչ կարգապահական տույժը մարված չէ, 22.08.2017թ. թիվ ԿԳ/74-Ա որոշմամբ կիրառված «վերապատրաստում (8 ժամ)» լրացուցիչ կարգապահական տույժը մարված չէ, 07.07.2018թ. թիվ ԿԳ/117-Ա որոշմամբ կիրառված «Տուգանք՝ 50.000 ՀՀ դրամ» հիմնական կարգապահական տույժը մարված չէ:

7. <u>Պալատի Խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Խորհուրդը՝ լսելով Դիմողի բացատրությունները և ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ փաստաբան Երվանդ Վարոսյանի

նկատմամբ Օրենք 19-րդ հոդվածի 2-րդ կետի, Կանոնագրքի 4.1 կետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Կանոնագրքի 2.2.2-րդ ենթակետի համաձայն՝ Մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական կամ այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Պալատի խորհուրդն արձանագրում է, որ Օրենքի 19-րդ հոդվածի վերոնշյալ նորմը փաստաբանի վարքագծի իրավաչափությունը գնահատելիս հղում է անում Կանոնագրքի և Պալատի կանոնադրության իրավադրույթներին: Տվյալ դեպքում Պատասխանողի կողմից Օրենքի նշյալ իրավադրույթի խախտման հանգամանքի պարզումն ուղղակիորեն կապվում է Կանոնագրքի և, մասնավորապես, դրա 2.2.2 ենթակետի շրջանակներում Պատասխանողի վարքագծի գնահատման հետ: Հետևաբար, Կանոնագրքի նշված ենթակետի խախտումը հանգեցնում է նաև Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի խախտմանը:

Կանոնագրքի 2.2.2 ենթակետով փաստաբանի վրա դրվում է համակողմանի պարտականություն իր գործունեության բոլոր բնագավառներում նպաստել փաստաբանության մասնագիտական բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու արտահայտմանը: Սույն պարտականությունն ունի ինչպես պոզիտիվ, այնպես էլ՝ նեգատիվ բնույթի պարտավորության դրսևորում: Առաջին դեպքում ենթադրվում է փաստաբանի կողմից որոշակի ակտիվ գործողությունների կատարում սեփական մասնագիտական և անձնական վարկանիշի բարձրացման ուղղությամբ՝ այդպիսով նպաստելով փաստաբանի մասնագիտության հանրային վարկանիշի բարձրացմանը: Նեգատիվ պարտականությունը փաստաբանի պատշաճ վարքագծի նվազագույն շեմն է, երբ փաստաբանից պահանջվում է առնվազն չկատարել հանրորեն պարսավելի, անպարկեշտ, հակաօրինական և փաստաբանի մասնագիտության հանրային վարկը խաթարող գործողություն կամ անգործություն:

Կարգապահական գործի նյութերով և կողմերի բացատրություններով Խորհուրդը հաստատված է համարում, որ Փաստաբանի հասցեին հնչեցվել են սեռական բնույթ կրող հայհոյանքներ, որոնց սկզբում **Փաստաբանը չի պատասխանել նույն կերպ** միայն նշելով «Քեզ չափի մեջ պահի» արտահայտությունը: Մինչդեռ սեռական բնույթ կրող հայհոյանքների տարափը շարունակվել է Փաստաբանի հասցեին:

Պալատի Խորհուրդը նշում է, որ Փաստաբանը նույնպես հասարակության անդամ է, զգացմունքներ ունեցող մարդ, հետևաբար Դիմողի կողմից

Փաստաբանի և վերջինիս ազգականների հասցեին հայհոյանքներ տալու դեպքում վերջինս պետք է որևէ կերպ արձագանքեր այդ իրավիճակին՝ պաշտպանելով ազգականների և իր արժանապատվությունը:

Պալատի խորհուրդն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ փաստաբանի հասցեին նման վիրավորանքներ և հայհոյանքներ հնչեցնելը, անթույլատրելի է համարվում և խիստ դատապարտելի է:

Միաժամանակ, Խորհուրդը չի կարող անտեսել այն հանգամանքը, որ Փաստաբանը ստեղծված իրավիճակում ի վերջո կատարել է որոշակի արտահայտություններ: Այնուամենայնիվ, Պալատի խորհուրդը ընդգծում է այն փաստը, որ վիրավորանքները սկիզբ են առել հենց Դիմողի և մեկ այլ անձի կողմից, իսկ Փաստաբանը սկզբնական շրջանում չի պատասխանել նրանց նույն կերպ՝ հասկանալով, որ իր վրա դրված են բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ, և իր նկատմամբ գործող առանձնահատուկ պահանջներ՝ կապված անձնական վարքագծի հետ:

Այս համատեքստում հատկանշական է, որ նշված հանգամանքների հիման վրա հարուցված քրեական գործը փաստացի կարճվել է հենց այն հիմնավորմամբ, որ «նշված արտահայտությունների «աղբյուրը» չի հանդիսացել Փաստաբանը, այլ միայն վերադարձրել է դրա հեղինակին՝ պաշտպանելով իր արժանապատվությունը»:

Վերոգրյալը մեկնաբանելով՝ կարելի է փաստել, որ փաստաբանի վարքագիծը դրսևորվել է իր հասցեին սեռական բնույթի հայհոյանքների տարափ հնչեցրած դատավարական հակառակորդ կողմին սաստելու և ստեղծված տհաճ իրավիճակը ավարտելու, հայհոյանքներ հնչեցնող անձնավորությանը լռեցնելու միտումով:

Ավելին, կարգապահական վարույթի շրջանակում փաստաբանին վերագրվող արարքը, այն է՝ մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական կամ այլ բնագավառում դրսևորած վարքագիծը պետք է կասկածի տակ դնի կամ խաթարի փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը, իսկ տվյալ դեպքում փաստաբանի քննարկվող գործողությունները իրենց բնույթով ավելի քան նման են «հակադարձման», «սաստման», քան մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական գործունեության:

Ամփոփելով վերոգրյալը՝ խորհուրդը գտնում է, որ Փաստաբանը թույլ չի տվել այնպիսի վարքագիծ, որով ստեղծված իրավիճակում կարող էր կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով,

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Երվանդ Ռաֆիկի Վարոսյանի (արտոնագիր՝ թիվ 776) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.2 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-22013 կարգապահական վարույթը կարճել:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնումսույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի կարգապահական
գործով նիստը նախագահող՝ Պավել Գյուլումյան

27 դեկտեմբերի 2022թ.
թիվ ԿԳ/84-Ա
ք. Երևան